



*Շրջակա միջավայրի նախարարության  
«Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ*

---

*ԱԳՐՈՂԵՐՆԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ*

*ՏԵՂԵԿԱԳԻՐ*

*2023*

---


*Մեպտեմբերի երկրորդ տասնօրյակ*

*Տեղեկագիրը կազմել է ագրոտեղեկատվության բաժինը՝ մասնագիտացված ագրոտեղեկատվության կայաններից ստացված տեղեկատվության հիման վրա:*

*Տեղեկագրի պատասխանատու՝ տնօրենի տեղակալ Գ. Մուրենյան*

## ՀԻՄՆԱԿԱՆ ՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Սեպտեմբերի երկրորդ փասնօրյակում օդի միջին ջերմաստիճանն ողջ հանրապետությունում ցածր է եղել նորմայից 2-3 աստիճանով:



Տասնօրյակի ամենաբարձր ջերմաստիճանները գրանցվել են Տավուշում՝  $+22...+28^{\circ}\text{C}$ , Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝  $+21...+23^{\circ}\text{C}$ , նախալեռնային շրջաններում՝  $+27...+29^{\circ}\text{C}$ , Սյունիքում՝ հովտային շրջաններում՝  $+25...+27^{\circ}\text{C}$ , նախալեռնային շրջաններում՝  $+18...+20^{\circ}\text{C}$ , Շիրակում՝  $+21...+25^{\circ}\text{C}$  (Աշոցք՝  $19^{\circ}\text{C}$ ), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝  $+20...+23^{\circ}\text{C}$ , նախալեռնային շրջաններում՝  $+24...+26^{\circ}\text{C}$ , Գեղարքունիքում՝  $+18...+22^{\circ}\text{C}$  (Սեմյոնովկա՝  $+15^{\circ}\text{C}$ ), Լոռիում՝  $+20...+23^{\circ}\text{C}$ , Արմավիրում՝  $+28...+30^{\circ}\text{C}$ , Արարատում՝  $+27...+29^{\circ}\text{C}$ , Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝  $+18...+20^{\circ}\text{C}$ , նախալեռններում՝  $+23...+28^{\circ}\text{C}$ :

Տասնօրյակի ամենացածր ջերմաստիճանը դիտվել են Տավուշում՝  $+8...+10^{\circ}\text{C}$  (Դիլիջան՝  $+3^{\circ}\text{C}$ ), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝  $+2...+4^{\circ}\text{C}$ , նախալեռնային շրջաններում՝  $+9...+11^{\circ}\text{C}$ , Սյունիքում՝ հովտային շրջաններում՝  $+12...+14^{\circ}\text{C}$ , նախալեռնային շրջաններում՝  $+5...+8^{\circ}\text{C}$ , Շիրակում՝  $+2...+4^{\circ}\text{C}$  (Աշոցք՝  $-2^{\circ}\text{C}$ ), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝  $+3...+5^{\circ}\text{C}$  (Հանքավան՝  $-1^{\circ}\text{C}$ ), նախալեռնային շրջաններում՝  $+8...+10^{\circ}\text{C}$ , Գեղարքունիքում՝  $+2...+7^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $+1...+6^{\circ}\text{C}$  (Տաշիր՝  $-3^{\circ}\text{C}$ ), Արմավիրում՝  $+8...+12^{\circ}\text{C}$ , Արարատում՝  $+10...+12^{\circ}\text{C}$ , Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝  $0...+2^{\circ}\text{C}$ , նախալեռններում՝  $+8...+10^{\circ}\text{C}$ :

### Տասնօրյակային տեղումներ



Տասնօրյակի ընթացքում տեղումների գումարային քանակը շիրակում կազմել է 9-15մմ (100-153%), Լոռիում՝ 17-38մմ (127-286%), Տավուշում՝ 16-22մմ (132-157%), Արագածոտնում՝ լեռնային շրջաններում՝ 11-21մմ (86-157%), նախալեռներում՝ 2-11մմ (38-162%), Գեղարքունիքում՝ 12-19մմ (119-206%), Կոտայքում՝ լեռնային շրջաններում՝ 9-16մմ (108-142%), նախալեռներում՝ 9մմ (184%), Արմավիրում՝ 2-3մմ (59-73%), Արարատում՝ 5-8մմ (250-313%), Վայոց ձորում՝ լեռնային շրջաններում՝ 30մմ (8%), նախալեռներում՝ 7մմ (206%), Սյունիքում՝ հովտային շրջաններում՝ 11-13մմ (79-203), նախալեռներում՝ 28-79մմ (277-322%):











### Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը



Սեպտեմբերի երկրորդ տասնօրյակում հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանները լեռնային շրջաններում գրանցվել են -1...+4°C, Արարատյան դաշտում, Տավուշի հովտային շրջաններում, Արագածոտնի և Վայոց ձորի նախալեռներում, Սյունիքի հովտային շրջաններում՝ +6...+10°C աստիճան:



**Վեգետացիոն ինդեքսի ընթացիկ ընթացքն անցյալ տարվա և բազմամյա միջինի համեմատ**





## Գյուղատնտեսական մշակաբույսեր

Տասնօրյակի ընթացքում շարունակվել են գյուղատնտեսական աշխատանքները:

Լեռնային շրջաններում կատարվել է աշնանացան ցորենի ցանք, նախալեռնային շրջաններում՝ նախացանքային աշխատանքներ:

Առանձին հովտային շրջաններում կատարվել է առվույրի երրորդ հունձ, ամենուրեք շարունակվել է կարտոֆիլի, բանջարանոցային մշակաբույսերի, պտղատուների, խաղողի բերքահավաքը:

Եղանակային պայմանները նպաստավոր են եղել բերքահավաքի համար:

Որոշ լեռնային և նախալեռնային շրջաններում դիտված տեղումները փոքր-ինչ բարձրացրել են հողի խոնավությունը՝ բարելավելով աշնանացան ցորենի ցանքի և նախացանքի աշխատանքները: